



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Յէ ի՞նչ պատմեց Յրէրոնէմը, կամ ինչ է Սիֆիլիզը
գրեց՝ Տօթթ. Լ. Գրիգորեան:

Նախ խոստովանութիւն մը . . . : Բժիշկ ըլլալու ի վեր որչաճ էի Սիֆիլիսի մասին գրուած որ եւ է հայերէն գրութիւն չկարգալ: Ինչո՞ւ: Որո՞հետեւ ամէն նշքերով բժիշկ այդ նիւթի մասին բան մը կը գրէր: Առ հասարակ գրուածները տափակ ու անիմաստ կ'ըլլային: Շատերն ալ ֆրանսերէն բառերու հաւաքածոյ մը կը ներկայացնէին: Զաւարի բան էր Ա, ոչ գրողը հասկցեր էր իր նիւթը եւ ոչ ալ կարգացողը բան մը չ'իմանար այդ բարեկանական խոսակութիւններէն:

Հակառակ ԲԺ. Լ. Գրիգորեանի հանդէպ տաճած յարգանքիս, — որպէս տաղանդաւոր գրող եւ լաւ պատրաստուած հմուտ բժիշկ մը, — «Բուժանք»ի մէջ պարբերաբար հրատարակուելէ վերջ (դեռ չէ աւարտած) գրքոյկի ձեւով ամբողջութեամբ ի լոյս ընծայուած «Յէ ինչ պատմեց Յրէրոնէմը» անունով իր գրութիւնը օրերով մ'նաց գրասեղանիս վրայ առանց կարգացուելու իմ կողմէս, համաձայն իմ որոշումիս զոր վերեւ յիշեցի:

Սակայն օր մը, իմ գուարթմանս դասատուիս, Տօթթ. Էտմաի մէկ սասցուածքը յիշելով որոշեցի կարգալ այս գրքոյկը: «Չօրիները միայն իրենց միայրը չեն փոխեր» ըսած էր ան օր մը մեզի: Ու ես, մտարեկելով Յէ չօրի մը չէի, սկսայ ծայրէ ծայր, մէկ շունչով կարգալ ԲԺ. Գրիգորեանի գիրքը: «Մէկ շունչով» ըսի, Տիշդ է. որովհետեւ ուրիշ կերպով կարելի չէ կարգալ այդ գլուխ գործոցը՝ գրուած Սիֆիլիսի մասին: Սիրային վկայի մը պէս դիւմիչ է ան եւ դիւրընձեռնելի:

Հեղինակը խօսքը կուտայ Յրէրոնէմին, Սիֆիլիսի սիրրոպին եւ անոր բերնով սահուն եւ գրեմէ բանաստեղծական ոճով կը դառն Սիֆիլիսի աւերները, դարձմանումը եւ արգիլումը: Սիրուն պատմուածք մը զոր մարդ կը կարգայ հասցոյրով և միայնգամայն հիացումով: Սիֆիլիսի մասին գրուածներուն լաւագոյնն է այս գրքոյկը որովհետեւ՝

Ա. — Լեզուն դիւրահասկնայի է եւ մանաւանդ մաքուր հայերէն է:

Բ. — Դուր հոն չպիտի գտնէր երկարաշունչ բացատրութիւններ նո գիտական տափակ մանրամասնութիւններ:

Գ. — Անոր էջերը զարգարուած չեն ֆրանսերէն կամ լատիներէն գիտական բառերով:

Դ. — Պատկերագրող է ան եւ այդ պատկերները դաստիարակիչ են:

Ե. — Ամբողջ է սակայն կատարեալ: Հոն չկայ կրկնութիւն եւ ձանձրացուցիչ տեսութիւններ: Լեցուն է գործնական ճեղգըրութիւններով:

Զ. — Սարսափազգու չեն անոր էջերը. այլ լուսարձակի՝ մը նառագայմներուն պէս բարեբար: Սիֆիլիսի նանկերուն մէջ գալարուողներուն համար յոյսի եւ միջնարութեան հրեղէն սիւն մըն է ան:

Է. — Դաստիարակիչ է ան ամէն սեռի եւ դասակարգի մարդոց համար, անգամ բըժիշկներուն համար:

Ը. — Ճէ մեծադիր էջերով այս գրքոյկը գոհար մըն է առանց Սերութեան: Նետուելիք աւերորդ տող մ'անգամ չգտայ անոր մէջ:

Այս գրքոյկը չափուեցաւ եւ կատարեալ գտնուեցաւ: Կը շնորհաւորեն մեր յարգելի պաշտօնակիցը իր այս մեծ եւ շինարար գործին համար:

Վա՛յ այն հայուն որ չի կարդար այս ուղեցոյցը:

Պոստըն

ԲԺ. Ա. Ս. ԱԲԷԼԵԱՆ